

# ՔՆԱԾ ՉՂՋԻԿԻ ՎԵՐԵԼՔԸ

## պոեմ ծաղկեփունջ

...05.09թ

... հետո նույն արագությամբ կոճկեցիր կուրծքդ.

նույն դանդաղությամբ՝ ես այն բացել էի...

հիմա փակվում ես նաև շապիկով...

Հիմա, աշխարհի ամենա հանճարեղ կադրը ստինքների և կիսաբաց շապիկի համադրումն է:

... միայն ես գիտեմ.

ազդրերդ դեռ թրթռում են...

այն ջութակի կնտացող լարի արծազանքի պես է...

Ջութակի կնտացող լարի արծազանքը լռության անձավներում մերկանալով՝ սկսում է անլսելի ժպտալ...

Ջութակի կնտացող լարի արծազանքը լռության անձավներում մերկանալով՝ ոչ լսվում է, ոչ էլ...

... ու մեր ականջների երեք բաժինների համար էլ մնում է անխմելի՝ ջութակի կնտացող լարի արծազանքը՝ լռության ակվարիումում լողացող...

Իսկ այն՝ ինչին մենք ապրել ենք անվանում, իրականում, միջին ականջում ինքնահաստատվելու անընդհատ փորձ է՝ անցյալի ու ապագայի ազդակներից դողացող փորձ...

\*\*\*\*\*

Մինչ քեզ՝ բազմաթիվ ու բազմաձև մարմիններ իրենց հետքերը թողեցին իմ վրա...

Դե... մի խոսքով՝ հանցանշաններից կուշտ եմ ու հարուստ.

հեշտությամբ կբռնվեմ, ինչպես դաջվածքով մարդը...

... քո դեպքը ուրիշ էր...

Առայժմ, միայն մարմին չես:

Բոլորին եմ սա ասել.

բոլորն էլ, դարձել են մարմին...

ավելի ճիշտ, միայն մարմին...

Իսկ ավելի ճիշտ, ես չեմ հիշում իմ առաջին սերը.

ինքնիրեն ստացվեց.

ոչինչ չզգացի.

հետո չէի հասկանում՝ ինչու չզգացի.

հետո հասկացա՝ ինչու չէի հասկանում.

հիմա հասկանում եմ, որ առաջին սեր չեմ ունեցել.

հետո կհասկանամ, որ առաջին սեր, ընդհանրապես չի լինում...

Այն մեր հորինած երազանքն է, որով շատն ենք ուզում, որով մեկընդմեջ մաքրվում ենք ու ապրում ավելի թեթև թոքերով...

Իսկ շրթամբույրը երկու բան է.

1. Արհեստական շնչառություն՝ մեր պարտադրանքով մոռացված, նյարդաթելերում տնավորված հիշողություններին:
2. Շրթհարմոնահարություն, որի մեղեդին լսվում է միջին ականջում...

\*\*\*\*\*

... Մի քանի ժամ առաջ՝ գարնանը՝ ծաղկած ծիրանենիները բռնաբարվեցին...  
 Մի քանի ժամ հետո՝ գարնանը՝ ազահ ձյունաթափից մնաց մահվան քրտինքի պես հիշողություն ու ափսոսանք...

... Հետո առավոտը իր արևոտ մատնաթմբերով շոյեց քո ստինքներն ու իմ պարանոցը...

Մեր կապվածությունը վերածվեց անկողնայինից էլ դուրս ու վեր մի բանի. անգամ, սիրուց էլ այնկողմնային մի բանի...

Իսկ սրանից առաջ՝ գարունն ապտակեց մեր քիթումըռութին.

մենք վերհիշեցինք մանկական շրթակիտումն ու...

սիրահարվեցինք...

Սա ծիծաղելի չէ.

ժպտալու բան է...

Գոնե...

– Քնեն՝ք:

– Քնե՞նք:

– Հա՛, ի՞նչ:

– Բա քնելուց առաջ՞:

- Էլի կքնենք՝ խո~րը, առանց հորինովի երագի...

– ...տաք, ու փափկելու աստիճա՞ն...

- ...քրտնելու, անշարժանալու, կծկվելու չափ...

– Բա քնելուց հետո՞...

– Կքնենք...

- Է~հ...

- Էլի՛ խորը, տաք ու կծկվելու չափ...

– Լա~վ էլի... Չէ՛, վախենում եմ արդեն քնելուց...

– Մենակ քնելու պատճառով:

– Երևի չգիտեմ... Բայց ապրել ուզում եմ...

- Արի՛, գիշերն էլ մատնաթմբեր ունի...

– Հա... մոռացել էի. գիշերը շոյում է այն մարմնամասերը, որոնցից առավոտն ամաչում է...

- Ես էլ էի մոռացել, որ գիշերով շոյվում են այն մանրամասները, որոնք առավոտյան փակվում են...

... Հետո առավոտը ցուցամատով քորեց քիթը...

Ա~յ քեզ ուղեղից հիվանդ առավոտ.

բռնել մեր ստինքներից ու պարանոցներից՝ ստիպում է համբուրվել:

Ավելի լավ է դեղաբույսի դառը թուրմ խմես, քան չուզելով շրթհարմոն նվազես.

սիրտ խառնելու չափ տհաճ հնչյուններ կլսվեն, չէ՞...

Երևի՝ առավոտը ծնվելիս բժշկի ձեռքից ընկել է ծնարանի հատակին...

Լավ, ոչինչ...

\*\*\*\*\*

Հիմա վատ չէր լինի թունավորվել անկողնային ծուլլ թավալտվությամբ...

...Ուզում եմ իջնել ու հասնել բարձունքին:  
...Դրա համար պետք է մահվան օղակում գլուխկոնձի տվող աշխարհ:  
...Կա. առաջին տիեզերքն ու Երկիր մոլորակը:  
...Դրա համար պետք են նաև դու:  
...Է~հ, էլի բարդացրիր պարզ գլուխկոտորուկը...

Մարմինս պատշգամբում է.  
Մարմինս լիցքավորվում է մարզանքով, իսկ աչքերս...

...դու երկու ձեռքով կոճկում ես ձախ ձեռքիս երկու մատներով արձակած կրծկալդ...  
Մի կարմրագույն դեղին է ներծծվել ճերմակ կապույտի թաղանթում:

Ես,  
աչքերս,  
մարմինս,  
պատշգամբը...  
պայթելու չափ լցվել ենք, բայց դեռ մնում ենք գայլախտավոր...

Կոնքիդ բաց ամոթխածությունն ամբողջացավ.  
նյարդաթելեր, ծակոտկեն, եռանկյուն սրտամաշկ.  
սրանցից սարքված վարտիք ու...  
Կոնք...  
Ինչ-որ պահի ծնված մտածողության ակնագնդերին փռվում է հիացմունքի փառը...

Ատելու չափ չեն սիրում կոստյում, մանավանդ, երբ դու ես կեղևակալված դրանով:

- Գեղեցիկը ծնվում է իր բնից,  
Ինչպես թիթեռը՝ բոժոժից...

\*\*\*\*\*

Ճնրթված բարձի ու սավանի ծալքերում ավելի շատ հիշողություն կա, քան ուղեղի ծալքերում:

Կուսությունը արդուկված հոգին ու աշխարհընկալումն է՝ թափանցիկությամբ փաթեթավորված ու երբևէ չօգտագործված սպիտակեղենի պես...

Ես ծամոնի պես ձգձգում եմ «առայժմի» համբույրը, որ դու...

Հիշողություններ կուտակելը ցավոտ հաճույք է,  
Հիշողություններն հիշելը՝ հաճելի ցավ...

Ես մնացի շուրթերիդ ու վերելակով ներքև իջա:  
Այնտեղ, վերևում, լավ էր:  
Ես լվացվում էի քո լռությամբ ու սրբվում թաքուն հոգոցներովդ...

Ես արգելված պտուղ եմ քո համար...  
Շատ ծիծաղելու էր. դուրս եկավ, որ ես քաղցր եմ...  
Բա էլ ինչու՞ եմ այսքան դառնություն զգում մեջս:  
Փաստորեն, մարդիկ դառն են կամ հակառակը, ըստ արգելված լինելու կամ հակառակը...

\*\*\*\*\*

Մի քանի դար առաջ քնից զարթնեցի ու որոշեցի հագնվել:

Ինչ-որ շորեր գտա...

Դրսում պարզվեց, /բնականաբար, կողմնակի աչքերի լուսանկարչությամբ/, որ տարբեր գուլպաներ են հագել...

Հետո, իմ պատահական հագնվելը դարձավ նորաձևություն...

Դու ինձնից նորաձև ես:

\*\*\*\*\*

## ԻՄ ԹԱՏՐՈՆԸ

Թատրոնը հանդիպման վայր է...

Թատրոնում հանդիպում ես քեզ, ու քո միջի բոլոր «ԵՍ»-երին...

Թատրոնում սիրում-ատում-սիրում ես քեզ, ու քո միջի բոլոր «ԵՍ»-երին. դրանում քեզ կօգնեն թատերագիրը, բեմադրիչը, արտիստը և բոլոր նրանք, ովքեր մանկաբարձում են այն անկեղծ զրույցը, որը կոչվում է... ներկայացում:

Դրանում քեզ կօգնես դու, եթե ընդունես, որ հանդիսատես լինելը դեռ չի նշանակում լինել միայն դիտող-դատավոր:

Ես քեզ հրավիրում եմ... չէ, կանչում եմ իմ Թատրոն, ինչպես ամենակարևորն ասելու պահանջ ունեցող ընկերդ քեզ կսպասի... հիվանդանոցում՝ անշարժ պառկած...

Ես եմ քեզ կանչում, որովհետև, դու ինձ երբեք չես կանչել... բայց, երևի, մի օր կկանչես, չէ՞...

Ես ու իմ Թատրոնը կգանք՝ սիրածին առաջին անգամ հանդիպողի զգացողությամբ...

Ես ու իմ Թատրոնը չենք կարող միշտ անշարժ մնալ:

Մեր համար կարևոր չի՝ սրճելու՞ ենք, ճոխությամբ ընթրելու՞, թե... զբոսնելու:

Մենք նախընտրում ենք թափառելը, թափ առած ապրելը:

Մենք նման ենք ենք փողոցում, մարդկանց մեջ համբուրվող ու պարող խենթ զույգին:

Մենք ուզում ենք, որ սա դառնա ներշնչվող օդի մի մասը:

Մենք՝ ես ու իմ Թատրոնը, ուզում ենք, որ մարդիկ դադարեն համբուրվել ու սիրել միայն իրենք իրենց մեջ:

Մենք չունենք քանոններ, չափակարկիներ ու կանոններ, որովհետև, կյանքն ինքը չի ընդունում դրանց:

Մենք չենք ընդունում մեզ պարտադրվող իրականությունն ու ճշմարտությունը, որովհետև, ցանկացած պարտադրանք, ինքնաբուխ ճշմարտության ու իրականության հերն անիծում է... մոր մասին էլ չեն ասում...

Մեր տեսած իրականությունը՝ մարդու հենց այսպիսին լինելն է, ու հենց այսպիսին լինելու պատճառով սարքված իրականությունը:

**Ամենալավ մարդը քնած երեխան է:**

Մենք սիրում ենք մարդուն և չենք ամաչում դրանից:

Մեր սիրած ճշմարտությունը՝ անկեղծություն:

Մեր սիրած ճնշումը՝ արյան՝ համբուրվելուց բարձրացող ճնշում:

Մեր սիրած լացը՝ մանկական- անարցունք:

Մեր սիրած մահը՝ ծերունական:

Մեր սիրած ծնունդը՝ չալանավորված ու առողջ:

Մեր սիրած գույնը՝ բազմերանգություն:

Մեր սիրած նոտան՝ բազմաձայնություն:

Մեր սիրած բառը՝ խոսք:

Մեր հասցեն՝ առայժմ առաջին ՏԻԵԶԵՐԲ:  
Մեր սիրած շարժումը՝ ԱՌԱՋԸՆԹԱՑ:  
Մեր սիրած կանգառը՝ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ:  
Մեր սիրած «Մնաս բարովը»՝ ԲԱՐԵՎ, էլի կհանդիպենք...

Գարիկ Հովհաննիսյան/ԳարՍու/  
18.03.2009թ  
Երևան, ՆՓԱԿ

...Կարդացի՞ր...

Հա՛, լսի.

Ես դերասան չեմ:

Ես թատրոնի սիրածն եմ:

Ես ունեմ «Իմ թատրոնը»:

Իմ թատրոնն ունի «Ինձ...»:

Դու իզուր ես վախենում:

Ես չեմ խաղում՝ առավել ևս՝ քո մոտ կամ քո դեմ:

Ես «խաղալու» կարիք չունեմ՝ առավել ևս կյանքի մոտ կամ դեմ:

Բեմում ես բավարարում եմ իմ մարդկային թուլությունը՝ դրանով բավարարում նաև ուրիշներին... ը...

Կոպիտ ասած՝ կանոնավոր ՍՕԽ-ով ապրողի ինչի՞ն է պետք ձեռնաշարժությունը:

...խեղճ թատրոն.

Ինչքա՞ն խանդողներ ունես...

Իմ լավ, սուրբ պոռնիկ...

... Լսում ես չէ՞.

Ես ու Իմ Թատրոնը սիրում ենք իրար...

Զէ՛, սիրուց էլ կարևոր մի բան ունենք իրար հանդեպ ու համար.

դա սիրելու և խղճալու արանքում աճող, և այս երկուսին էլ ստվերող մի բան է...

Ես քեզ չեմ սիրի, եթե չսիրեմ Քո Թատրոնը:

Ես սիրում եմ Քո Թատրոնը...

Արվեստում՝ ամենից առաջ ու ամենից շատ կյանք է պետք. ինչու՛, որովհետև,  
կյանքում ամենից շատ... կյանքն է պակասում...

\*\*\*\*\*

... Ես քո մեջ եմ մտել ականջներովդ:

Հիմա՝ աչքերովդ ներմուծվելուս պահն է:

Բայց հիմա աչքերիցդ արտահոսում է իմ այն մեկը՝ ականջներովդ մտածը:

Դուրս է գալիս նա, կանգնում իմ ու քո միջև ու անխռով խանգարում երկուսիս էլ...

Ես չեմ կարող սպանել նրան. ձեռքս մեջս չի մտնի...

Դու չես կարող սպանել նրան. ձեռքդ չի գնում.

ախր նա ավելի է սրտիդ մոտ, ավելի է անիրական, անթերի...

Հա:

Իրականությունը մեր ունեցած ամենամեծ թերությունն է, իսկ ապրել ասվածը՝  
թերություններ ստեղծելու և շտկելու ժամանակահատված է, որ կա...

Մեր ընդհանուր խնդիրը.

... քո ականջմտուկը դառնալուց հետո, ինչքան էլ դուրս եմ գալիս աչքերիցդ, ոտներս  
էլի մնում են սրտումդ, ու...

Սրտխփոցդ փոխվել է, գիտեմ...

Տրորվող սրտի զգացողությանն էլ եմ ծանոթ...

Փակեիր բերանս ու ականջներդ, ապու՛շ... ես ո՞նց արեցի...

Դժվար է՞ր համբուրվելը...

\*\*\*\*\*

- Ըստ քեզ, ո՞րն է մարդկության ամենակարևոր գյուտը:

Զէ՛, ասա, հետո շարունակիր լսել...

... Ո՛չ:

Շրջանագիծն է:

Դե հա՛, շրջանագիծը եղել է մարդկությունից առաջ և կլինի հետո էլ, բայց քո  
ասածներն էլ են չէ՞ սրա պես անմահ ու անցողիկ...

Ամեն ինչն էլ անմահ է ու անցողիկ՝ ժպիտի համար ծախսված էներգիայի պես...

\*\*\*\*\*

... Սիրելը հեշտ է. մենք ենք բարդացնում...

Եթե ժամանակի խնդիր չլինի, մենք կստեղծենք, ու հենց ժամանակը կդառնա խնդիր:

Սա ժամանակից վախենալու ձև է՝ ամենահայտնիներից մեկը...

զոնե դու՝ լավ ծանոթ ես սրան...

ու դու փորձեցիր ծանոթացնել ինձ ու սրան...

և իմ ու սրա ծանոթությունը բնական վիժեցումով սկսվեց ու վերջացավ...

դու նեղսրտեցիր ու...

պարզ բանը նորից բարդացավ...

\*\*\*\*\*

Զսանրվելն էլ է սանրվածք.

Ի սկզբանե եղել է հենց այս սանրվածքը:

Հիմա այն կիրառվում է որպես նորաձևության նվաճում՝ «մասնագետների»  
միջամտությամբ...

...Սոցիալական սիրո «մասնագետներ» էլ կան.

Նրանց խորհուրդներին հետևելով՝ մոռանում ես սիրո խորհուրդը՝ ոչ մեկին  
չմանավելու խորհուրդը...

... Ի դեպ, ես չեմ սանրվում...

\*\*\*\*\*

... Վերելակի շուրթերը բացվեցին առաջին հարկում:

Հետո էլ ասում են՝ առաջինը բարձրակարգ է:

Իջնելուց՝ կամաց-կամաց իջավ արյանդ ճնշումը, որին նոր ձիթն էին հաղորդել իմ  
վերելակի դռները...

... Վերելակի շուրթերը տեսան իմ խոշոր ափերից պոկված ու հեռացող թիկունքդ.

ուղղագծվեցին վերելակի շուրթերը՝ համբույր սպասող, բայց չստացող բերանի պես.  
թթռացին վերելակի շուրթերը՝ քո լաց նախերգող դնչիկի պես...

... Դու կքայլես դատարկ լռություն եռացնող միջանցքում, ու էլեկտրական թեյնիկի կարմիր լուսի պես կմտածես.

- Ինչու՞ են վերելակով ներքև իջնում...

\*\*\*\*\*

... Բերանը՝ որպես սեռական օրգան:

Ամենաառաջին հագուստը կոնքայինն էր.

մարդը սկսեց պահպանել սերնդատվության աղբյուրը, որ սերունդ ունենա...

մարդը, հետո, պահպանում էր սերնդատվության աղբյուրը՝ սերունդ չունենալու համար...

... Մարդը, հիմա, սերունդ չունի.

ուրեմն, անհմաստ է պահպանել սերնդատվության ել ու մուտերը...

... Եվ բերանի ու իր ելքի գործն ավելացավ, որովհետև մարդու ամենաուժեղ հիշողություններից մեկը նրբացած նյարդաթելերի ու ՍՕԽի հիշողությունն է...

Իսկ երբ խնդիրն արհամարհում ես առանց լուծելու, դառնում է գլուխկոտրուկ. այսպես՝ ատամի ցավից ծնվում է գլխացավը...

\*\*\*\*\*

Ես ձեռք բերած կորուստներս զգում եմ ինքնախորշանքի համբույրներով.

...Ու պայթեց մեր կրքի կարմիր ինքնաթիռը.

Ու մեր կարմիր կրքից պայթած ինքնաթիռի ամենամեծ ականջը մի սև արկղ մնաց՝ որպես բիբ՝ կիսախուփ աչքերին...

...Էլ ի՞նչ վերապրում.

Բիբ փորելը կարծում ես հե՞շտ է...

... հոգու արյան կարմիր գնդերը՝ վախից ու ցավից ակնագունդ դառան:

Լավ եղա՞վ:

Չէ՛, չէ՞...

... Հա՛, կասեմ՝ ինչու եղավ.

կասեմ՝ առանց հորինովի, արհեստական հարց ու պատասխանի.

կասեմ՝ առանց հորինովի, արհեստական հարց ու պատասխանով դազադապատ զեղումների...

Պեղումները կատարվում են բբերում՝ հոգուն արյուն փոխներարկող ասեղով...

Ահա արդյունքը.

մեր օդակայանները կապող թռիչքից առաջ չտեսանք, որ երկինքը կանաչ չէ.

մոռացել էինք, որ երբ մեր օդակայանները կապող թռիչքից առաջ երկինքը կանաչ չէ, ուրեմն վտանգավոր է երկինքը ու դարանակալ մեր սավառնումին...

Սևեռումը դարձրինք ուղենիշ ու...

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԿՐԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ ՎԱՌՎԵԼ ԵՆ ՈՒ ՓՈԽԵԼ ԵՐԿՆՔԻ ԳՈՒՅՆԸ

Պատվանդանին՝ ժպտացող չղջիկի արձանն է.

Պատվանդանին՝ Երկրի վերջին չղջիկի ժպտացող արձանն է...

... Լավ, կներես, էլ չեմ կարող խոսել:

... Խանութում եմ.  
Վերջին անոթ թթվածինը պիտի գնեմ՝  
Վերջին սիրուս համար...

... Իմ ու քո հայրենիքը եղունգի չափ է՝ եղունգի տակի մսի չափ...  
Երբևէ, պատահաբար, եղունգիդ տակ փուշ կամ այլ սրություն մտե՞լ է՝ հասնելով  
մինչև սիրտդ...  
Երբևէ, պատահաբար, եղունգիդ քար կամ այլ ծանրություն ընկե՞լ է՝ սրտիցդ արյուն  
քամել ու կուտակել ու կապտացրել եղունգդ...

Արհեստական եղունգիդ ճանկըտոցը ցավոտ է՝ առանց հաճույքի...  
Պոկի, էլ չդնես...

Իսկ իմ եղունգները ամուր եմ, կարճ ու... մաքուր...

\*\*\*\*\*

Ինչ-որ բան առաջին անգամ անելու դողի պես անկեղծ ընթացք կար այն ամենի մեջ՝  
ինչ մերն էր...

Բայց ընդհատված ընթացքից հետո հասկացանք միայն, որ «այն ամենը» մերն էր...  
անկեղծորեն հասկացանք՝ ինչ-որ բանն առաջին անգամ անելու դողի պես  
անկեղծորեն...

\*\*\*\*\*

... ինձ ոչինչ այդքան չի պահել իր մեջ, որքան քիչ առաջ քեզանով լցված բաղնիքը:

... հիմա բաղնիքը նոր թուլացած արգանդ է...

... պատերի թաց լարծունությունը, օձի աչքի պես, իր մեջ է ներծծել քո մերկ  
մաքրությունը՝ օձագալար, նվաղկոտ, ծիրանի մաշկի պես քո մաքուր մերկությունը...

... քեզնից հետո լողանալ չի լինում...

... քեզնից հետո սկսում եմ գողանալ պատերի բնանկարները՝ դանդաղ,  
աստիճանաբար վայելելով...

Այսպես եմ սովորում քեզ փայփայելու եղանակը:

... բաղնիքն ինձ այնքան է պահում իր մեջ, որ հասկանում եմ.

«Քեզ համտեսել է պետք, ոչ թե լափել...»

«Ինձ հիմա ոչ մտածել է պետք, ոչ էլ մտածված խաբել. ինձ պետք էք դուք՝  
երկուսով...»

... Երեկ, մենք չճնված երկվորյակների պես էինք.

մեզ բավարարում էր փրփուրն ու գոլորշին...

Քո ստինքներն ու իմ պարանոցը շոյող առավոտվա մատնաթմբերից սկսվող մեր  
պորտալարերը կտրվեցին ու չխաչաձևվեցին, որովհետև...

մենք բավարարվեցինք փրփուրով ու գոլորշով...

... Վաղը ես կդառնամ չճնված երկվորյակ՝ մեկ ուրիշի հետ.

նա իմ մարմնում կգտնի հոգուդ մատնահետքերը, ու ցավից՝ արցունքներով կլվանա  
կուրծքս...

նա այսպես կջանա ջնջել քեզ ու ննջել իմ մեջ...

Հիշու՞մ ես:

դու էլ էիր նույնը անում...

այսօր...

\*\*\*\*\*

Գոնե ուշ-ուշ պատահեինք, որ այսքան հաճախ չկարոտեինք իրար:  
Մի քիչ ուշ-ուշ՝ ամենօրյայից մի քիչ հազվադեպ, որ չդառնար համակերպվելի ու սովորական՝ ադամանդի եզրի պես կտրող այս տառապանքը:  
Բարևելու պաշիկի պես բնական, օրգանական այս տառապանքից խմբագրվում են իմ գեներում պահեստավորված միլիոն հատ դարերը, հայրենիքները, պատմությունները, ծնողները, մեռած ու ծնված երեխաները...  
Խմբավորվում-խմբագրվում-ջնջվում են բազմասեր ու բազմաթիվ կանայք՝ իրենց լիասպառ ցուցաբերելով ու սրահներով...  
սրանց մեջ՝ ես՝ որպես մշտական կամ միանգամյա, կիսահամբեր, կիսահանդերձ ճահճակիրք այցելու...

Ա՛րի, իրար պատահաբար հանդիպելուց առաջ պայմանավորվենք, որ. «Մենակ չենք լինի...»:  
Դու ընկերով, ես՝ ընկերուհով /այսինքն, ավելի մենակ, քան դու ընկերուհով, ես՝ ընկերով/...  
...Հասկացա. չօգնեց.  
Ավելին.  
Նրանք վատ զգացին իրենց, ինչպես անցանկալի արթնացումից մոռացվում է լիամետրաժ, գունեղ երազը...  
Լա՛վ, արի՛...  
...Է~հ, նեղանում ես նեղացի...

... Դո՛դ:  
Ես ե՞րբ եմ հոգնել քեզնից, որ հիմա էլ հոգնեմ...  
Լավ ե՞ս...  
Ես էլ, ցավդ տանեմ...  
Գիտեմ, շատ եմ ցավ տվ...  
բայց, մի թույլ, ես ե՞մ տվել, թե՞ դու ես ունեցել նրան ու գնացել...  
կամ գնացել ես, դրա համար ունեցել...  
Վերջը՝ քոնն արեցիր չէ՞.  
հաճույք հունցեցիր ցավից, ինչպես հավից՝ բարձ...  
Ու հիմա լի~քը ճուտիկներ՝ որպես մի-մի բերան արև սևանում են իմ մեջ.  
Իմ հոգին եմ մաքրում ու դառնում գիշեր՝ կուտակված պարանոցի խալում...  
համբուրելով գիշերը հասկանում եմ, թե այսքանից հետո մենք ինչու միատեղ հետո ունենք.  
Քո ունեցած ու ինձ պահած հենման կետերն ավելի խորքային են՝ քան ստիճանները, որոնք կոճկում էիր նույն դանդաղությամբ, ինչ արագությամբ որ ես պլոկել էի...  
\*\*\*\*\*

... Այո:  
Մենք անհատներ ենք:  
Սա անհայտ չէ մեզ:  
Անհա~տ...  
Ո~նց է հնչում:  
Կարծես ծիրանենու բոժոժ բողբոջից գեղեցկությունն է թռչում, որ հասունանա, դառնա ճշմարտություն...  
Ճշմարիտ է գեղեցիկի որոնման ճանապարհը:  
Գեղեցիկ է ճշմարիտը:  
**Եվ անընդհատ ապրում ենք ու ապրում:**  
Հա՛, մեկ-մեկ էլ՝ ծնվում:

Կան հայտնի ճշմարտություններ, որոնք ինքդ պիտի բացահայտես՝ անկեղծ արժեվորման համար:

Չէ, նկատի չունեն շրջանագծի գյուտը:

Ճշմարիտ սխալի մասին է խոսքս...

Գիտեմ, սա էլ շուտվա ճշմարտություն է, բայց ինքս եմ պեղել՝ հոգուն արյուն ներարկող ասեղով...

Տե՛ս, ինչ նման են մեր խոհանոցն ու... Քո Թատրոնը.

Սեղան՝ բեմ...

Աթոռ՝ դահլիճ...

Դարակ՝ կուլիս...

Փեղկ՝ վարագույր...

Եռացող-թափվող սուրճ՝ ծափեր...

Տապակած-մորթված թռչուններ՝...

Ինչքան ենք առնչվում իրար՝ խոհանոցում:

Ինչքան ենք առնչվում խոհանոցին...

Ինչքան ենք առնչվում ապրելուն...

Եթե մեկ-մեկ ծնվելը չլիներ՝ մեռնելն ինչքան տհաճ ու անհետաքրքիր կլիներ. բայց անպայման կլիներ...

Լսի, բայց մեր խոհանոցն ի՞նչ գործ ունի բաղնիքում...

...Մենք անհայտներ ենք...

Սա հայտնի է մեզ...

\*\*\*\*\*

Մենք ամեն օր ջանում ենք ճանաչել մեզ, ինչպես մանուկ է ծանոթ դառնում տաքին՝ մատը վառելով...

Մենք ամեն օր ջանում ենք ճանաչել ինքնես մեզ, ինչպես այն մանուկը՝ մատը բերանում իր նորվա նվեր խաղալիքն է ջարդում.

մանուկը հասկացավ իր խաղալիքի շարժման գաղտնիքը կամ էլ կհասկանա...

...և երբ, վերջապես, մի քիչ ճանչում ենք մեզ ու ինքներս մեզ, էլի մնում ենք մատը բերանում, քանզի մեզնից այնքան քչերն են մնացած լինում, քանզի մեզնից այնքան քիչ բան է մնացած լինում...

Ու մտածում ենք.

- Սրա համա՞ր էր այս գետնանցումի անդուլ քանդումը, որ կյանքն անվտանգ փողոցը անցնի՞...

\*\*\*\*\*

Հետո՝ գոտկատեղի զբոսաշրջությունը հասավ կոնք ու հաստատվեց կրքի վարձակալությամբ...

Ճչան, ուշագրավ ճարմանդով գոտիները սկսեցին հալ ու մաշ լինել՝ պահմտոցի խաղացող մերկապարերի վազքը այդքան գրկելով...

Ու արհեստածին ձանձրույթը ստիպված ինքնասպան է լինում այդ թանկ գոտի-պարանով...

Մագնիսին կպած՝ ոսկեջրած մագնիսիկի պես ճչան, ուշագրավ ճարմանդներն իրենց գործը լավ են անում ու միանգամից պատասխանում ակնագնդերի կենտրոնական հարցերին.

«Ազդերը սկսվում են կոնքի՞ց, թե ծնկներից»:

«Որտե՞ղ է էներգետիկ աղբյուրը»:

«Ինչպե՞ս մտնել կնոջ մեջ ու ճանաչել»:

«.....»:

«.....»:

«...»...

...Սրանով սկսեց մուգ ակնոցների և իրար նայել չկարողանալու տնքացող հազարամյակը...

\*\*\*\*\*

... Ծանոթություն...

... շփում...

Ընկերություն...

«Սեր»...

«ՍՕԽ»

Ու, կներեք կոպտությանս համար,

«Ամուսնություն»...

... Մատի թեթև հպում, ու...

գիշատիչ ծաղկի պես բացվում է դեմդ քո աշխարհը...

... Մատի թեթև հպում, ու...

գիշատիչ ծաղկի պես բացվում է դեմս... իմ աշխարհը...

... Մաքուր անմեղություն խաղացող առէջներից մեկում գրում եմ /ես/ էլ. փոստիս հասցեն.

գարհով@...

Մյուսում՝ գաղտնաբառը.

ԳարՍու...

Ու մտնում եմք.

այնպիսի կրքով ու կապվածությամբ,

այնպիսի սիրով ու կատաղի հնազանդությամբ՝

կարծես ծնվում ենք...

Թվում է՝ ուղղորդում ենք սլաքը, սակայն մենք ենք հետևում նրան.

այնպիսի կրքով ու կապվածությամբ,

այնպիսի սիրով ու կատաղի հնազանդությամբ՝

վզկապ-պորտալարը բռնածին հնազանդ շնիկի պես...

Ծանոթանում ենք,

ինչպես մկնիկն ու շնիկն են իրենց հեռակա կապը հաստատում:

Տեսնում ենք իրար՝

մեր ուզած,

մեր շինած-դգնված լուսանկարներով...

Սլաքը ձեռք է դառնում...

Շոյում ենք իրար...

Շփվում ազատ ու անկաշկանդ...

Խաղում-ստում՝

«Ընկերություն» վերնագրով ողբերգության մեջ:

...Խորանալով, պարփակվելով «նոր» աշխարհի ճահիճ վարսանդում,  
ամենաանկեղծ հոտառությունը խմբագրած՝ սկսում ենք «որոնումը»...

...Ըհը՞... Սե՞ր...

...Ը՛հը~...

...Ժամանակն է.

թողնելով վարսանդում մեր սերմերը՝ մուգ ակնոցներով դուրս ենք գալիս «հին»  
աշխարհ: Եվ քանի որ «շնիկ-մկնիկ» խաղափուլը արդեն եղել է «նոր» աշխարհում,  
սկսվում է ՍՕԽը՝

Սեռական

Օրգանների

Խառնաշփոթը...

...Ու...

վերջ

...մատի թեթև հայում...

\*\*\*\*\*

... Թատրոնը տաճար է, մզկիթ, եկեղեցի ու շատ իմանամ էլ ինչեր կհորինեն, ինչ  
սուտ ու փուչ բաներ կկայցնեն իմ պոռնիկ սրբին...

Բայց սրանք հեջ.

ինձ ամենասիրելին բեմ կոչվող զոհասեղանն է, ուր ամեն ծիսարարին ողջակիզվում  
են... Աստվածները՝ առանց ցավազրկման հերձված հոգիներով: Ողջակիզվում են  
անհոգի ու անաստված մարդկանց համար, որ սրանք ծափահարեն իրենց ուղեղի  
կոշտացած ավերով, շնչեն հոգեխորովման ծխով մաքրված օդն ու հասկանան, որ  
կոնքասրբանային նյարդաթելերի խլիրտից բացի, կյանքում ուրիշ շարժումներ էլ  
կան...

Սա՝ հենց էնպես, ուղղակի հիշեցի:

Բայց հենց էնպես, ուղղակի՝ ոչինչ չի լինում, բացի... պարզ ու հանճարեղ մահից...  
սովորական չէ՝ պարզ ու հանճարեղ...

\*\*\*\*\*

«Նոր աշխարհ»

...Խնդիրն ուրիշ տեղ մի փնտրիր.

Հա, լինում են նաև արտասարգանդային հղիություններ՝ արտագանգային  
հիշողությունների պես, բայց դա խնդիր չէ.

դա գործը մինչև վերջ հասցնելու խնդրագիր է...

«Նոր աշխարհ»

Այս Գիշատիչ ծաղիկը շատ ծաղկաթերթեր ունի՝

հասուն կնոջ բազմադարկ ու դարանող հմայքի պես...

«Նոր աշխարհ»

Խաբում ենք իրար այնքան բնական, այնքան անբռնաչար ու օրգանական, որ  
դառնում ենք...

չէ՛, դարձել ենք ստի բեռնատար...

...ես գրում եմ քեզ ու նաև մի քանիսին միաժամանակ.

այսպես, հատուկ լողաձևով, մի քանի մկանախումբ են մարզում միանգամից...

...դու գրում եմ ինձ ու նաև մի քանիսին միաժամանակ...

☺ մենք լողում ենք նույն լճում.

այսպես՝ արգանդում՝ իրենց առանձին պարկուճներում ապրող երկվորյակներն են միշտ իրար կպած ու իրարից անջատ...

... Ու իմ հետ, իմ պես՝ իմ հետի մի քանիսը՝ ամենքն իր մի քանիսով...

... Ու քո հետ, քո պես՝ քո մի քանիսը՝ ամենքն իր մի քանիսով...

Հենց այսպես ու հենց էնպես.

ամեն մեկը տալիս է իր մի քանիսին «մի քիչ», «մի քիչ», ամեն մեկից ստանում «մի փոքր»...

... Գիշատիչ ծաղկի փակվելուց հետո զգում, բայց չենք խոտովանում, որ մարսվեցինք մի կտոր էլ, որ կյանքից մի արյունոտ ու տաք պատառ էլ մսխեցինք՝ փոխարենը լցվելով մի անդեմ խճանկարով, որը ավելի վատ է քան փոշոտ դատարկությունը...

... Ես դրա ծնողը... հա~...

Չէ, ծնողը չէ. դաստիարակողի ծնողը...

Դրան /Գիշատիչ ծաղկին/ քոքահան անելն էլ քիչ կլինի.

Ասում եմ՝ դրա հին սերմը ճարենք, նորից ցանենք, խելքը գլխին դաստիարակություն տանք, որ գիտական հրաշքը ծլարձակի նորից ու չդառնա հրեշ...

\*\*\*\*\*

... Մենք ունենք մեր արտամրցույթային հիշողությունները.

սրանք՝ գաղտնագրված քարտի պես խրված չեն մեր ներգանգային կիսագնդերի արանքում...

սրանք ավելի մարդկային են, քան մարդն ինքը...

սրանք, հաճախ, ներողամիտ ժպիտով նայում են իրենց նախկին

հավատակիցներին...

այ, սրա~նք, գաղտնագրված քարտի պես խրված են մեր ներգանգային կիսագնդերի արանքում...

բացի, սրանից, սրանք ամեն օր ելնում են մրցասլացքի...

սրանք, ամեն օր, ինքնահաստատման – մաքառումի քրտինք են արտադրում...

Է՛, որ ի՞նչ...

... Ունենք նաև ռեկորդակիր - ապրված հաճույքներ, որոնք տրորում են մաքուր, անբռնաբար շրթամբույրի երկնած թիթեռին, ինչպես հանրահայտ կայացածը՝ նորելուկին... մոռանալով իր սկզբնաբոժոժը...

Սրանց «Է՛, որ ի՞նչը» քիչ է.

Սրանց «Է, հետո՞ն» էլ չի գթաշարժում...

Սրանք քեզ կպատասխանեն քեզ խուլ ու հնչել տնքոցների խառնածին հառաչանքով... ու պըրծ...

\*\*\*\*\*

... Մի ժամանակ, հոգին առողջ էր.

/հետո պարզվեց՝ սա ժամանակավոր է/

Այդ ժամանակ էր, որ հոգին օրգանիզմ էր.

ուներ բջիջներ՝ ապրող մեղվաբների պես,

ուներ հյուսվածքներ, օրգաններ, օրգան-համակարգեր...

մի խոսքով՝ իսկական մեղրատու փեթակ...

հետո... մի ամպամած օր, նրա մեղուները խաբվեցին Գիշատիչ ծաղկի հմայքից...

... ու հոգին այդ ամպամած օրվանից հետո դարձավ համակարգիչ... ☹

Սրա պատճառով պատճառավոր դարձավ խեղճը՝ թունավոր հղիություն...





Ես ձեր ցավը տանեմ, չեք պատկերացնի մարմինն ու հոգին ոնց էին ուրախացել. ամեն մեկը մի կիսագնդից կախված, հո չէր ծծում, հո չէր ծծում~մ... պատմելու բան չի, է՞, պիտի տեսնեիք. մի մշմշոց էր փռվել վեց կողմի, ասես գաղթունը չփակված մանուկ էր արտաշնչում... երջանկությունից՝ մարդ քիչ էր մնում մեռներ... ամեն ինչ հենց այդ քչի մեջ էր...

Ու մարդը չմեռավ:



Նրանց սերն արտահայտվում էր մի հատիկ, միակ կապով. մի հատիկ, միակ կապը կամրջում էր իրենց ու իրենց ցանկությունները և շարունակվում մինչև ողնաշարի միայնակ ու գոռոզաձիգ ուղեղի սահմանագիծը... Բայց սրա ուղեղին չէր հասնում, որ այդ բիբ մաքրող ցանկություններն է պետք մարմնին փոխանցել, ոչ թե...




... Պատկերացնում եք. այնքան սիրեցին ստինքներն իրար, որ մեկը մյուսին տվեց ինչ որ ուներ... Այդ օրվանից՝ գլխուղեղի աջ կիսագունդը տիրացավ մարմնի ձախ կեսին, ձախը՝ աջին...




Նրանք ապրում են իրար կպած ու հեռու՝ մշտապես կարոտելով ու չխանգարելով իրար: Բայց ինչքան էլ նրանք մեկ մոլորակի կիսագնդեր են, էլի ամեն մեկը ամեն մեկ է: Սրանից է, որ երբ դժբախտաբար կամ պատահաբար վնասվում է նրանցից մեկը, մարմնի որևէ մասը կեսը դառնում է չփտող, կենդանի մեռել... Իսկ նրա գուգընկերն ինչ էլ անի՝ չի կարող փոխարինել իր մյուս կեսին...

Չէ՞ որ նրանք անհատներ են:  
Չէ՞ որ անդառնալիկ շատ դառն է, ու ինքնախաբուծի շաքարով չես կարող խմել...



... Իսկ գոռոզ, երկար քիթը ցից ողնուղեղն այդպես էլ չսիրահարվեց ու չսիրեց. Չէ՞ որ նա գոռոզ է. ու քիթը երկար է հերիք չի մի հատ էլ ցից է... Բայց մի օր...



\*\*\*\*\*

**ՀԵՔԻԱԹ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ**

Եղավ ու չեղավ մի կին:  
Նա իր «Եղավ չեղավ»ի միջանցքում հասցրեց բաներ անել, որոնցով հաստատեց իր ինքնահերքումը. Սիրեց... Ամուսնացավ... Ծնեց... ու մի օր հասկացավ, որ իր ծնածն, ընդամենը, իր ամուսնության մարտավկան է եղել...

մյուս օրը հասկացավ, որ իր ամուսնությունը իր սիրո բռնաբարիչն է եղել՝ գազոնային տրամաբանությամբ, կպրախիճ ճամփի հանդարտությամբ մի հին խմբագրում է եղել իր ամուսնությունն իր սիրո համար...

... Եվ նա սիրեց...  
... ու էլ չեղավ...

... Չկար ու եղավ մի կին:  
Նա իր չգոյության ու ինքնարարման արանքում հասցրեց շատ բաներ անել.  
սիրեց, ամուսնացավ, երեխա...

Ու մի օր գգաց:  
Մի օր գգաց, որ թիակների արանքից մինչև սրբանը՝ մի մտածկոտ ցավ գնում-գալիս, գնում-գալիս է՝ իր երթուղին կրճատելով դեպի կենտրոն...

Մյուս օրը... չէ, մյուս օրը... չէ, կներես, մյուս օրը գգաց.  
արգանդից մի քիչ վերև,  
ծվարանները միցնող շիկացած մետաղալարի կենտրոնում,  
ուղիղ ողնաշարի վրա...  
ԶԳԱՑ.

մտածկոտ ցավը կանգնեց, խտացավ, դարձավ ինքնամփոփ, դարձավ մռայլ,  
դարձավ հանճարեղ գործի երկունքից գալարվող հոգի, դարձավ խիտ, բաց ու  
երջանիկ...  
Ցավը դարձավ ցավ:

... կինը հիշեց, որ իզուր է ապրելն օգտագործել որպես չմեռնելու միջոց:  
... կինը վերհիշեց, որ ապրելը պետք է որպես ապրելու նպատակ...  
Զգաց, բայց մի քիչ ուշ...

... Ղե... ես այս միլիոն տարվա ճշմարտությունը քեզ վաղուց, անընդհատ ասում էի,  
բայց դու...  
... ճիշտ ես.

Ճշմարտությունը մաշկի ծակոտիներով են ընդունում, ոչ թե գանգի:

\*\*\*\*\*

... ողնուղեղը ձանձրացավ.  
ողնուղեղը նախանձեց իր կողքին երջանիկ ապրող, զուգավորված կողոսկրերին ու  
սրանց միջի նյարդաթելերին...

/չես էլ ամաչում. գերան հալով՝ ճյուղին կնախանձե՞ն/  
Ողնուղեղը սկսեց հիվանդանալ զուգընկերացավով:

Ոչինչ չէր օգնում:

Փորձեց սիրել ինքն իրեն.

ինքն իր հետ անկողին էր մտնում... բայց էլի, ոչինչ չէր օգնում...

նրան արհամարհում էր անգամ ոչինչը...

հանկարծ, մի միտք բռնեց նրա հանրահայտ քթից ու...

- Այո~,- ուրախությունից շունչը կտրվեց...

- Այո, այո, այո~... երջանկությունից միզեց իր միոտանի շալվարի փողքին...

Ու գնաց պլաստիկ վիրահատության:

Ողնաշարից մի քանի ող հանեց, որ մարմնի քաշը թեթևանա...

... այսպես՝ նա դարձավ հաշմանդամ...



Ես ամուսնացա...

22. 09. 09թ  
Երևան  
ԳարՍու